

20 JUL 2010

ԳՐԱՓ. Հ. ԳԱՐԵՒԵԼՅԱՆ

# ԱՄԱՐԱՅԻՆ ԼՈՒՇԵՐԻ

ԳՐԱՓԻԼ ԱԿՏԻԿԱՆ

Յ Ե Վ

ԹԵՐԱՊԻԱՆ

616-0532  
7-13

Հրատարակություն Առժողկոմատի Սան-լուս բաժնի

Դրովական

1938 թ.

12 MAR 2013

ՄԱԿ ՀՀ 85

5235

616-053.2  
Գ-13 Ա.8.

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Մի խումբ յերիտասարդ բժիշկներ դիմել են ինձ, խնդրելով, վոր յեռ տպագրության հանձնեմ իմ զեկուցումը, վորը կարդացել եմ անցյալ տարվա՝ լուծերի դեմ պայքարի կապակցությամբ գումարված մանկաբուժների կոնֆերանսիայում:

Յերիտասարդ բժիշկների այդ գիմումն ինքնին ցույց է տալիս, վոր մեր բժշկական հասարակայնությունը շահագրգուկած է այն մեծ սոցիալական պրոբլեմով, վոր ներկայացնում են մարտողական ուղիների խանգարումները մանկական վաղաժամ հասակում, վոր նա ցանկանում է ամառային լուծերի պայքարի ձգորիտ պատկերացում ունենալ լուծի պրոֆիլակտիկայի հարցերի մասին, վոր նա կամենում է լիովին տիրապետել լուծերի ռացիոնալ թերապիային, վոր նա ուղում է տեղյակ լինել այն ըուրը դիետետիկ նորություններին, վորոնք դիտության վերջին նվաճումների արդյունքներն են:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

b367  
38



## ԴԻՍՊԵՊԱՒԱՅԻ ՊՐՈՓԻԼԱԿՏԻԿԱՆ

Հասարակ յեվ տոքսիկ դիսպեպսիայի պրոֆիլակտիկան ընդհանուր և միեվնույնը:

Տոքսիկ դիսպեպսիան շատ հաճախ հասարակի շարունակությունն է, հասարակը փոխվում և տոքսիկի: Այդ անցումը յերբեմն նկատելի յեւ և դա այն ժամանակ, յերբ հասարակը տեվական է, իսկ յերբեմն ել աննկատելի՝ յերբ հասարակը կարձատեւ և թույլ:

Պաթոգենետիկորեն յերկուսն ել կազմում են մի պրոցես, յերեվույթների մի շղթա:

Տարրերությունը յերկուսի միջև քանակական է, քանակը հասնելով վորոշ չափի, դառնում և վորակ: Այդ և պատճառը, վոր յերկու դիսպեպսիաների պրոֆիլակտիկան հանգում և միեվնույն գրույթին:

Պրոֆիլակտիկայի առաջադրանքը՝ ընդհանրապես բոլոր պրոֆիլակտիկ միջոցառումների նպատակը, կարելի յեւ բնորոշել նետելյալ կերպ՝ ստեղծել կենցաղային տլնափիսի պայմաններ, վորապեսզի հանրավոր լինի մանկան համար ապահովել կանանակությունը, խելացի խնամք և նպատականարմար ռեժիմ, նրա հասակին, նրա անհատական կոնստիտուցիոնալ առանձնահատկություններին համապատասխան:

Այդ նպատակի համար, իհարկի, անհրաժեշտ և գարնան մոտ, մորիլիդացիայի յենթարկել Մոր և Մանկան Պահպանության բուժ, պրոֆիլակտիկ հիմնարկները, կոնսուլտացիաները, մսուրները, պատրոնաժը, տնային ոգնության բժիշկներին, գվրոցական բուժ, անձնակաղմին:

Այդ նպատակի համար անհրաժեշտ և նաև աշխատավորության մեջ հարկավոր լայն հետաքրքրություն զարթեցնել գեպի

մանուկների յահացության նշանավոր փակտուրաներից հզորագույնը — լուծերը:

Զմռան ընթացքում նախորոք պետք ե հաշվի առնվեն այն մանուկները, վորոնց առանձնապես սպառնում և ամառային լուծերը, հաշվառման հն յենթակա նաև բոլոր հիմուրոֆիկները, ամրոֆիկները, բոլոր նրանք, վորոնք ժանր ժառանգականություն ունեն, վորոնք ինֆեկցիաներ են տարել, նրանք, վորոնք ապրում են կենցաղային բացառիկ վատթար պայմաններում:

Ինքնին հասկանալի յե, վոր առողջապահական բաժինները պետք ե կազմ ու պատրաստ ունենան բավարար չափով բուժական մահճակալների ցանց:

ՍՆՈՒԹ. — Պրոֆիլակտիկ միջոցառումների շարքում առաջին և գլխավոր տեղը բռնում է սնումը, սննդի վարակը, քանակը, ինչպես նաև սնման ռեժիմը, ընդմիջումները՝ գերսնումից ու թերսնումից խուսափելու համար:

Այստեղ առանձնապես պետք ե շեշտել բնական սնունդը — կնոջ կաթը, նա ընդհանրապես բացառիկ արժեքավոր սնունդ ե. արժեքն առավելապես մեծ ե վերոհիշյալ կարդին պատկանող մանուկների համար:

Կնոջ կաթն, իբր սնունդ, պետք ե դրվի ամենաառաջնակարգ, ամենաբարձր տեղը թե վորպես մանկան համար հարազար սընունդ, թե վորպես պրոֆիլակտիկ միջոց:

## Կ Ա Թ Ն Ա Հ Ա Վ Ա Բ Ա Կ Ա Յ Ա

Վերոհիշյալից բղխում ե այն նշանավոր գերը, վորն ունի կատարելու կնոջ կաթի հավաքակայանը, նա հանդիսանում է վերին աստիճանի գնահատելի, եփեկտիվ, պրոֆիլակտիկ միջոց:

Մրանից պարզվում ե նաև այն վնասը, վորն ստացվում է, յերբ մեր կոնսուլտացիաներում ու մուռներում վաղաժամ, 2-3 ամսական յերեխաներին, նրանց սայրերի աշխատանքի յեղած ժամանակ, արհեստական լրացուցիչ սնունդ են նշանակում:

Այդպիսի գեպերում պետք ե կերակրել կթած, սառը տեղ պահած մայրական կաթով:

Ինչ վերաբերում ե իբրեւ Փիզիոլոգիական պահանջ 5-6 ամսական յերեխաներին ամառը տրվելիք լրացուցիչ սննդին պետք ե նկատի ունենալ և հատկապես հաշվի առնել, վոր յերբ ամառ ե գալիս, առանձնապես խորհուրդ ե տրվում գործա-

ծելու թթու կաթնախտոնուրդները, վորոնցից գերադասությունը պատկանում է մածոնին, սպասին, ժաժեկին, թանին և ուրիշ կաթնամթերքներին:

## Զ Ր Ի Ն Շ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն Ը

Կարեվոր ե ընդգծել ջրի խոշոր ֆիզիոլոգիկ նշանակությունն իրեւի պրոֆիլակտիկ միջոց. ջրի պլանաչափ, սիստեմատիկ գործածությունն ոժանդակում է ջրի այն մեծ կորստի վերականգմանը, կորուստ, վորը տեղի յե ունենում մաշկային շնչման (պերսպիրացիայի) շնորհիվ: Ջրի փոխանակության հավասարակշռությունը բարձրացնում և որգանիզմի դիմագրողականությունն ինֆեկցիաների հանդեպ և ուժեղացնում ե ներվային սիստեմի տոնուսը:

Դիսպեպսիաներն ամռան սկզբին և ամառվա ընթացքում տուանձնապես հաճախակի յեն դառնում: Այս հանգամանքը վորոշակի ցույց ե տալիս, վոր կազ կա մի կողմից կլիմատիկ ֆակտորի, տոթի, մյուս կողմից հիվանդության ծագման միջեվ:

Դա առաջանում է նրանից, վոր տոթը գերջերմացնում և (перегревает) մանկանը: Գերջերմացումն առանձնապես հեշտանում է մանկան անատոմոֆիզիոլոգիկ հատկությունների շնորհիվ:

Մանուկն ունի փոքր մասսա, մեծ մակերես, վորի հետեւնքով չերմականոնավորումն անկատար ու թերի յե լինում: Այդ է պատճուռը, վոր մանուկն ավելի շուտ ե ջրազրկման յենթարկում, իսկ ջրազրկումն առաջ է բերում ացիդուկ թունավորում:

Եքսպիրիմենտալ տվյալները ցույց են տալիս, վոր գերջերմացման ժամանակ յերեխան հն գալիս մի շարք ֆիզիոլոգիկ փոփոխություններ. այն ե՝ ստամոքսի և աղիքների մոտորիկայի խանգարում, ստամոքսային հյութի անկում, հյութերի փոխանակության ընդհանրություններ՝ հակումով դեպի այդիգողը:

Գերջերմացման հետ սերտ կատ ունի նաև աննպատակահարմար հագուստը, յեթի մանկանը շատ են փաթաթում, դրանով, ինարկե, նպաստում են գերջերմացմանը: Բարակ հագուստն ամռանը թարմացնող է, նաևս հագուստը թմրացնող է: Այստեղից պարզ ե, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի ռացիոնալ հագուստի պրոպոգանդն ամառ ժամանակ:

Զերմացումի հետ կտպված և նաև ջրային մանիպուլիացի-  
աների, լողարանների, ջրային շփումերի, ջրային դռւշերի  
հարցը:

Այդ մանիպուլիացիաները, բացի նրանից, վոր մաքրում են  
մաշկը, որանով նպաստում են մաշկային շնչման, նրանք նայել  
զովացնում են մանկանը, բարձրացնում են ներլային սիստեմի  
առողջություն են բերում մանկանը:

## Ս Ն Ն Դ Ի Ս Ա Ք Բ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ինչ խոսք, վոր սննդի մաքրությունը շատ կարեվոր նշա-  
նակություն ունի: Այդ նշանակությունն առանձնապես խոշոր և  
ամունը, յերբ տոթի ազդեցության ներքո սննդամթերքներն  
արագորեն քայլայվում են, յերբ նրանք ավելի հեշտությամբ  
են յինթարկվում ինֆեկցիաների:

Ուստի սննդամթերքների պաշտպանությունը փոշուց, կեղ-  
տից և ճանձերից դառնում ե մի շատ կարեվոր պրոֆիլակտիկ  
միջոց: Մանուկն ի բնե անմաքրասեր և, նա սիրում ե ամեն  
բան, ամեն իր, խաղալիք, իրեն թաթիկներով տանել բերանն,  
ապա ուրեմն ձեռքերի, իրերի խաղալիքների կրկնակի լվացումը  
նմանապես զուրկ չե պրոֆիլակտիկ նշանակությունից հենց լու-  
ծերի տեսակետից:

## ՀԱՍՏԱԿ ԴԻՍԹԵՊԱՏԱՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Թերապիայի առաջնագույն խնդիրը կայանում է նրանում,  
վոր խափանվի, բակտերիաների ստորին աղիքներից դեպի վեր  
բարձրանալը. յերբ bacterium colit-ի խմբի բակտերիաները վեր են  
բարձրանում, այնտեղ առաջանում ե ածխաջրերի խմորում, յե-  
րեվան են գալիս թթուներ, վորոնք գոգոռում են լորձաթաղան-  
թըն, առաջացնում են աղիքների պերիստալտիկան: Բացի օ.  
colit-ի խմբից, ակտիվանում են նաև մի շարք ուրիշ բակտերիա-  
ներ՝ օ. lactis aerogenes, proteus, perfringens, Enterococcus,  
staphylococcus և այլն:

Առանձին դեպքերում, դեր են խազում նաև պարատիփող  
և դիզենտերիկ միկրոբները:

Այդ խնդիրը լուծելու համար և, վոր մենք, նախ և առաջ,  
սննդից բեռնաթափում ենք մարսողական որգաները, սահմանա-  
փակում ենք սնումը, նշանակում ենք ջրային կամ թեյի դիե-

տա, տալիս ենք լուծողական (Ol. Ricini). Թերապիայի յերկրորդ  
խնդիրը՝ զա թջիջների խախտված հիգրոպինադիկայի վերականգ-  
նումն ե: Այդ նպատակին և ծառայում նախ կորած ջրի լրա-  
ցումը և ապա այնպիսի սննդի ընտրությունը, վորը դյուրա-  
մարս ե, չի պարունակում իր մեջ ածխաջրերի մեծ քանակու-  
թյուն, վորոնք հեշտությամբ խմորվում են և այնպիսի սննդն,  
վորն իր մեջ չի պարունակում մեծաքանակ ձարգային նյութեր,  
վորոնք մարսողության վրա ճնշող ազդեցողություն ունեն:

Լավագույն սննդն այդ տեսակետից կնոջ կաթն ե: Այդ  
կաթը յեվս պիտք և սկզբում տալ չափավոր, վորոշ ընդմիջում-  
ներով և զգուշությամբ ավելացնելով քանակը, հաշվի առնելով  
հիգանդի անհատական տարողության չափը:

Կաթից բացի, խորհուրդ և տրվում գործածել՝ թան, սպիտա-  
յին կաթ, լորձային յիգուկներ, թթու խառնուրդներ, վորոնց  
շարքում առաջին տեղը գրավում են մածոնն ու սպասը:

Այստեղ պիտք և շեշտել, վոր խառնուրդների թթու ուժակ-  
ցան նպաստում է ստամոքսա-աղիքային ֆերմենտների ավելի  
յիռանդրուն գործունեյությանը և միեվնույն ժամանակ թթու խառ-  
նուրդներն ավելի դյուրամարս են. հասարակ դիսպեպայայի ժա-  
մանակ սիստեմատիկորեն կիրառվում են կոմպրեսներ, հոգնա-  
ներ, վաննաներ:

## ՏՈՔՍԻԿ ԴԻՍԹԵՊԱՏԱՅԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Տոքսիկ դիսպեպայայի բուժման հիմնական խնդիրն է պայ-  
քարել ինտոքսիկացիայի դեմ:

Ինտոքսիկացիան հետեւանք և չորացման (էքսիկկողի) չո-  
րացումը հետեւանք և ջրազրկման (անհեղբեմիայի): Ուրեմն  
անհրաժեշտ և որգանիզմին ջուր տալ անհրաժեշտ և վերական-  
գնել բջիջի-ջուրն իր մեջ պահելու, իր հետ կապելու ընդունա-  
կությունը, վորպեսզի վերականգնվի նյութերի կանոնավոր փո-  
խանակությունը:

Դեղինտոքսիկացիան հետ մղելու առաջին քայլը, ջրային  
դիետան ե, վորի տեխնոլոգիանը տարբեր դեղփերում պիտի  
սահմանվի տարբեր չափով՝ 6-8-12-24 ժամ, նայած ինտոքսի-  
կացիայի ուժնությանը, խորությանը, նայած հիվանդի բնա-  
կագությանը (կոնստիտուցիային), նայած նրան, թե հիվանդը  
եվտրոֆիկ ե, հիպոտրոֆիկ, թե ատրոֆիկ: Ջրի մատակարարու-

ու կատարվում է տարբեր յնդանականերով՝ ոչ, որ կլիստամ, կաթիլային հոգնաներով, յենթամաշկային, ներլենային, ինտրապերիտնեալ ներարկումներով:

Յերբ ինտոքսիկացիան չքանում է, յերբ զիտակցությունը դառնում է հստակ, մաշկն ստանում է իր սովորական գույնը, դաշտարում և «մեծ շնչումը» («большое дыхание») և փսխումըն, այդ դեպքում հանդես է գալիս թերապիայի տեսակետից յերկրորդ խնդիրը՝ նպատակահարմար զիտայով պահպանել ըստ անդգած նոր կացությունը, վորապեսզի բջիջային պրոտոպլազմայի վերականգնված ունակությունները նորից չխախտվին:

Սնումը պետք է տանել վերին աստիճանի զգույշ, մննդիքանակը պետք և ավելացնել աստիճանաբար, բաժինները (պորցիաները) պետք է տալ մանր, սկզբում կթած սառցը ած կաթոված մեջ 10 անգամ:

Առաջին որը միայն ջրային զիտա, յերկրորդ որը կնոջ կաթ 10,0—10 անգամ որվա մեջ

մասցած ժամանակը ջուր

Յերկրորդ որը      »      15,0—10 անգամ և ջուր

Չորրորդ որը      »      25,0—10      »      »

Հինգերորդ որը      »      30,0—10      »      »

Սննդից բացի, կարելոր տեղ է գրավում ինամքը, վորի նպատակն և մանկանը դնել մաքսիմալ նպաստավոր պայմաններում, վորոնք մեծագույն չափով դյուրացնում են մանկան պայքարը հիվանդության դեմ:

Այդ ուղղությամբ պետք է նշել ողի մաքրությունը՝ բնակարանի ողափոխությունը, սպիտակեղենի հաճախակի փոխումը, ձերերի մաքրումն, ամանեղենի և բոլոր իրերի մաքրությունը, հիվանդի դիրքի փոխումը, մաշկի, բերանի, աչքի խնամքը:

Դեղորայքն իրենց տեղն ունեն՝ լուծողականն անհրաժեշտ է, լուղագույնն եւ օլ. Ricin:

Ախտահանիչներն այլինորդ են, սրտային միջոցները շատ դեպքերում ավելորդ չեն, նրանցից կարելորն եւ Coffein-ը լազ և glucosaz-ն  $6^{\circ}/_0$ - $8^{\circ}/_0$ - $10^{\circ}/_0$  Ringer-ի հեղուկի հետ, կամ սուանց նըրան:

Կարելի յե կիրառել և հոգնաները, անգուստ փսխումների ժամանակ դիմում են ստամոքսի լիացման  $0,5^{\circ}/_0$  Natri bicarbonici լուծությով:

Յնցումների ժամանակ կարելի յե դործածել խոնա:

Հետազում յերբ առողջացումը զանգազում ե, կարելի յե կիրառել ֆերմետոթերապիա. ac. mur. dil., pepsin կամ հետապիտ 15 սմ<sup>3</sup> 20 սմ<sup>3</sup> արյուն միանվագ կամ մի քանի անգամ:

## ԿՈԼԻՏԻՑԵՐԻ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ ՅԵՎ ԹԵՐԱՊԻԱՆ

Կոլիտների հարուցիչները բազմաթիվ են՝ դիզենտիրիկ խմբին պատկանող միկրոբները, պլուտոզուանիլ (Amoeba, Iamblia balantidium coli), պարատիֆող և այլ միկրոբները:

Պրոֆիլակտիկայի առաջնագույն խնդիրն եւ ընդհանուր սանիտարական միջոցներով վորքան կարելի յե խափանել ինֆեկցիաների աղբյուրները, վոր ինֆեկցիաները չտարածվեն, իսկ դրա նտիպայմանն ընդհանուր մաքրությունն ե, մննդամթերքի պաշտպանությունը կեղափաց, փոշուց, ձանձերից:

Այդ տեսակետից կարելոր է հիվանդի մեկուսացումը, բացիլակիրների հսկողությունը, նրանց հաշվառումն ու կարելույն չափի բուժումը:

Յերկրորդ կարեվոր պրոֆիլակտիկ միջոցառումը կանոնավոր սնումն եւ:

## ԿՈԼԻՏԻՑԵՐԻ ԹԵՐԱՊԻԱՆ

Ներկայումս բոլոր գիտական հեղինակությունները կոլիտների ժամանակ միաբերան խորհուրդ են տալիս լիարժեք սընունդ տալ:

Լիարժեք սնունդն այժմ փոխարինում է այն կիսասովով գիտային, վոր առաջ գոյություն ունեն կոլիտների բուժման գործում:

Լիարժեք սնունդի նպատակահարմարությունը հիմնվում է հետեւյալ դրույթի վրա՝ կոլիտի ժամանակ համարյա մենք միշտ ունենք միայն հաստ աղիքների ախտահարում, մարսողությունը մեծագույն չափով տեղի յե ունենում հաստ աղիքից զուրուց հինգետան սահմանափակ սննդով, խնայող դիետան, առաջացնում եր որգանիզմի ընդհանուր թուլացում, ուժերի անկում, նրա իմունիտետի իշեցում, մի հանգամանք, վորը նպաստում եր պարենտերալ, թարախային բորբոքումներին և յերկարացնում հիվանդի առողջացումը:

Գլխավոր ուղեցույցն այս կամ այն սնունդի ընտրաւթյան

մեջ հիվանդի ախորժակն և և վոչ թե կղանքի այս կամ այն վորակը: Նախ ընտրելի յե այն սնունդը, վորն իր մեջ քիչ քանակությամբ խարամներ և (ալակ) պարունակում:

Ախորժակը վոչ միայն սննդի ընտրության, այլ և քանակի վորոշման ուղեցույցն եւ:

Զափաղանց ոգտակար և գործածել այնպիսի թթու խառնուրդներ, ինչպիսիք են մեր մածոնը, կեֆիրը, բուլգարական յագուրտը. նրանք փոխում են աղիքների ֆլորան, նպաստում կաթնաթթվային միկրոբների զարգացմանն, իսկ վերջինները իրենց հերթին գուրս են վանում ուրիշ պաթոգեն միկրոբներին: Այսպիսով՝ վերոհիշյալ խառնուրդներն ոժանդակում են որդանիզմին նրա աղիքներում բակտերիալ բնակչության ավելի հաջող դասավորում կատարելու:

Խնձօրային դիետան վերջին տարիներում կոլիտների բուժման մեջ քաղաքացիական իրավունք և ստացել:

Այն հասակում, ուր կարելի յե այն գործածել, խորհուրդ և տրվում կարձ ժամանակ նույնպես գործադրել:

Զափակոր քանակությամբ վիտամիններն ոգտակար ներգործություն ունեն:

## ԴԵՂՈՐԱՅՑՔԱՅՑԻՆ ԲՈՒԺՈՒՄ

Դեղորայքային բուժման մեջ տոսջին տեղը գրավում են լուծողականները Ol. Ricini մինչև մեկ յերկու տարեկան և Ol. Ricini, Natri sulfur, Magn. sulf. ավելի բարձր տարիքի յերեխաների համար:

Լուծողականը դուրս և մղում խարամները, կանոնավորում սպասիկ սիմպատիները:

Մեծահասակ մանուկների համար թույլատրելի յին նարկոտիկները, Opium, Belladonna, Atropin.

Կոլիտի սկզբին կապող (adstringens) և ախտահանիչ (desinfectiens գեղորայքի կիրառումը լավ չեւ:

Այդ միջոցները կարելի յե գործադրել հետագայում, վորովհետեւ նրանք նախ սահմանափակում են աղիքներում տեղի ունեցող խմբումն ու նեխումն, ապա նրանք միանալով սպիտակին թյունավոր նյութերի հետ անլուծելի նյութեր են կազմում:

Զեսոցներն (գրելք) ու կոմպրեսները սիմպատոմատիկ նշանակություն ունեն:

Մեծ նշանակություն ունի նաև մաշկի խնամքը:

Լավ և սպիտակեղենի հաճախակի փոփոխումը, նրա ախտահանումը:

## ԱՄԻՈԲԱՅՑԻՆ ԴԻԶԵՆՏԵՐԻԱ

Կոլիտների շարքից առանձին ուշադրության արժանի յե ամփոբային գիղենտերիան, նրա կանխարգելիչ միջոցները հետեւյալներն են:

ա) Խիստ հսկողություն ջրի մաքրությանը:

բ) Սննդամթերքների պաշտպանությունը փոշուց, կեղափակ, ճանձներից:

շ) Ցիստակիլների հայտնաբերումն ու նրանց դիսպանսերի գաղացիան, ցիստակիլությունը վաչնչացնելու նպատակով:

զ) Ենդեմիկ վայրերում ձեռքերի, ատամների լվացումը յեռացրած ջրով:

Թերապիա-լուծողական Ol. Ricini, Natri, Magn. Sulfur, Calomel

Սպեցիֆիկ բուժում-հնդապույն թերեպետիկ միջոցը-բրազիլիական և 17 գարում այդ առաջարկել են Մարկ Գրաֆ և Պիղոնը. դա Radix iprecacuanhae-ն եւ:

Հիշյալ ենդինակները գործ եյին ածում Radix iprecacuanha-ն հետեւյալ գրությամբ՝ Int. r. iprec. eff 4,0:160,0. նրանք չափահանություններին տալիս եյին որը 80 սմ. 3:

Այժմ կիրառվող emetinum Hydrochloricum jpecacuanhae-ի կոմպոնենտն եւ նրա սպեցիֆիկ պադեցությունն ուսումնասիրել և վեղդերը:

Առաջին անդամն իբր ըուժիչ միջոց կիրառել և Ռոջերսը 1913 թվին:

Հաստ Զախարիկիսի եմետինի կիրառումից հետո մահացությունը գիղենտերիայից ընկել և 52 % ից մինչեւ 12 % իւ:

Հաստ Ռոջերսի մահացությունն ընկել և 34 % ից մինչեւ 0, իսկ հիվանդության տեղողությունն իջել և 16,4 որից մինչեւ 7,2 որ:

Սակայն եմետինը ներգործում և ամիսայի միայն վեգետատիվ ձեւերի վրա., ցիստերի վրա նա ազդեցություն չունի:

Եմեաինից բացի մի քանի հեղինակներ գործ են ածում և  
Neosalvarsan:

Համբուրգի արտինստիտուտի հոչակավոր գիտնական  
Մյուլենսն առաջարկել ե մի ուրիշ միջոց՝ jatren, վորն արդելա-  
կում ե ամիոբային անցնելու ցիտային ձեվին, վորը խանգա-  
րում ե ամիոբաների բազմացմանը: Jatren-ն իր մեջ պարու-  
նակում ե 28 %, Jodi, վորը յարեւի ներգործող կոմպոնենտն ե,  
նա լուծվում ե տաք ջրի մեջ, կիրառվում ե առավելապես քրո-  
նիկ դեպքերում:

Վորովինետիվ եմեաինը կոմուլյատիվ հատկություններ ունի,  
սովորաբար կիրառում են 4-5 որ, որը մեկ անգամ ներարկում,  
ապա դադար տալիս: Մանավանդ վոր եմեաինը ներգործում ե  
վեգետատիվ ձեվերի վրա: Վերջիններս ճիշտ այդ ժամանակին  
չքանում են:

Հասակավորների համար լավագույն թերապեվտիկ դոզան  
0,1. առաներկու տարեկանի համար՝ 0,05. 6 տարեկանի համար՝  
0,025. 3 տարեկանի՝ 0,012. մեկ տարեկանի 0,01. jatren դոզան  
peros՝ 0,1. 0,15. 0,2. 0,3-3 անգամ:

## ԲՈՒԺԱՆ ՍԻԵՍԱՆԵՐ

1) 3-5 որ եմեաին ներմկնային, դադար 14 որ. նորեն 3-5  
եմետին և դադար: Այդպես շարունակել մինչեւ ամիոբայի ան-  
հետանալը.

2) Jatren 8-10 14 որ.

դադար 14 որ.

նորեն 5 որ.

Բացի եմեաինից յատրենից գործ ե ածվում և նորագույն  
ախտահանիչ Rivanol

Rivanolը քանի առավել հետեւյալ ձեռք

Rp. Emuls Ricin 100,0

Rivanol 0,015

DS. Թեյի, անուշի դգալով որը 6 անգամ

Rivanol-ը կարելի յի գործադրել և Per Klysmam:

դուրս և դրվում լուծություն այսպես. Sol. Rivan 1.0.10,000

## ՀԱՅԻԼԱՐ ԴԻԶԵՆՏԵՐԻԱ

Խուր չե, վոր գերմանացիները ուղենաբերիան կոչում են՝  
Կոտինֆեկտիոն կանքային ինֆեկցիա, որա վարակը տարածվում ե  
էղանքի մասնիկներով, տարածվում ե կամ շիման, կամ թե  
աղատաված խմելիքի, ուտելիքի միջոցով:

Բացի ընդհանուր առողջարար միջոցառումներից, բացի լար  
պիզենաերիայի պրոֆիլակտիկան պահանջում ե, վոր հիվանդները  
հայտնաբերվեն և մեկուսացվեն:

Խրախուսելի և ապագա խոստացող միջոց պիտի համարել  
ակտիվ իմունիտացիան, ըստ Շիգայի, կամ վակցինացիան թրօս  
ըստ բեզրովկայի: Դիզենտերիայի գեմ պայքարի ավյալ ձեվե-  
րը մեծ ուշադրություն չեն զրավում, հարկավոր հետաքրքրու-  
թյուն չեն առաջացնում:

Թերապիան՝ նախ պետք ե ճիշել շիճուկային թերապիան:  
Սրա նպատակն ե չեղոքացնել աղիքներում առաջացող թույնե-  
րը, պաշտպանել վագոսիմպատիկ ներվային սիստեմը տոքսիննե-  
րի մասաբար ազդեցությունից:

Հակագիգենաբերիկ շիճուկի ազդեցությունն այնքան ավելի  
եֆեկտավոր ե ինչքան, վաղաժամ ե կիրառվում նա:

Շիճուկի գոզումը հետեւյալն ե՝

մինչեվ 3 տարին 25 սմ<sup>3</sup>

մինչեվ 7 տարին 75 սմ<sup>3</sup>

7-ից բարձր 100—150 սմ<sup>3</sup>:

Ցերեմն հարկ ե լինում, շիճուկի առաջին ներարկումից  
մեկ կամ, յերկու որ անց, նորից ներարկել յեթե բուժիչ եփեկ-  
տը չի նշանակում առաջին ներարկումից:

Բացիլյար դիզենտերիայի դիետոթերապիան նույնն ե,  
ինչ վոր առհասարակ կոլիտների ժամանակ:

Դեղորայքային բուժումն ե լուծողական, սրտային, կապող  
ախտահանիչ, շատերը նույնիսկ եմեաին, յատրեն, սիվանու են  
կիրառում:

Մանկան ստամոքսա-աղիքային հիվանդություններն այն-  
պիսի խոշոր չարիք են, վոր պահանջվում ե ամենասուր ուշադր-  
ություն, գետի նրանց պրոֆիլակտիկան և բուժումը:

565

5235

«Ազգային գրադարան



NL0279289